

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի այսուհետ՝ Օրենսգիրք 43.1 հոդվածի 2-րդ մասում Սույն հոդվածով բառերը փոխարինել Սույն հոդվածի 1-ին մասով բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 2191 հոդվածի 2-րդ մասում՝

1) «43.1-ին հոդվածի 2-8-րդ» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 2-րդ, 5-6-րդ, 8-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը տեղական ինքնակառավարման մարմինները քննում են 43.1-ին հոդվածի 5-6-րդ և 8-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 224 հոդվածի 1-ին մասում՝

1) «43.1-ին հոդվածի 7-րդ մասով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 3-4-րդ, 7-րդ, 10-11-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է 43.1-ին հոդվածի 3-4-րդ և 7-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: